բաթու 'ի հաստանել Զատկին Հայոց, եւ բառնալ զգուռն, և կատարեցին Հայք զԶատիկն հանդիսիւ, և ապա գնացին իւրաքանչիւր 'ի տեղիս իւրեանց։ Ընդ որ զայրացեալ Յունաց՝ գնացին 'ի Կոստանդինուպօլիս, և ետուն ըմբռնել զարս երկուս 'ի Հայոց, Մինաս քահանայ և Ալաճաճի Սէֆէր՝ և մատնեցին յատեան դատաւորին. և նոքա թէպէտ ցուցին զանձինս իւրեանց զօլ անպարտ, սակայն դատաւորն ստիպեաց զնոսա ուրանալ զհաւատս, և դառնալ 'ի կրօնս նոցին. այլ նոքա հաստատուն կացեալ 'ի քրիստոնէական հաւատս, կատարեցան սրով։ Իսկ Գրիգոր Պատրիարք յետոյ բազում աշխատութեամբ վճարեաց ըզպարտսն, զոր արարեալ էր վասն այսր գործոյ։

Յետ կատարելոյ զհանդէս Ս. Յարութեան Տեառն, խռովութեամբ և զօրութեամբ զինու, գրեցին դատաւորն քաղաքապետն եւ ամենայն արք երեւելիք հանրագիր 'ի Կոստանդինուպօլիս առ Արքայն Սուլթան Մուրատ Դ. յայտ արարեալ զամենայն անցս, որ անցին 'ի մէջ Հայոց և Յունաց՝ յաղագս խոտորման Զատկին. եւ թէ ո՛րպէս լուծաւ խնդիրն օրինօք դատարանի, եւ տուաւ գիր 'ի ձեռս երկաքանչիւրոց։ Եւ Արքայն տեղեկացեալ ամենայն հանգամանաց գործոյն՝ գրեաց հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի և առ դատաւորն Երուսաղէմի՝ բառնալ զհակառակութիւնս Յունաց, եւ չտալ թոյլ գործել ումեք ընդդէմ վճռոյ դատաւորին՝ նախնի սովորութեանց և կայսերական հրամանին, իւրաքանչիւր ազգ տօնել զԶատիկն ըստ իւրոյ սովորութեան, զայս հրովարտակ կուսակալն առաքեաց թղթով իւրով առ դատաւորն Երուսաղէմի ըստ խնդրանացն Հայոց։

Զպատմութիւն Ծռազատկի ընդ Յոյնս, եդաք 'ի կարգի գործոյս ըստ աւանդելոյ ձեռագիր պատմութեան գրեալ 'ի նմին ժամանակի հրամանաւ Գրիգորի Պատրիարքի, յորմէ առեալ է եւ Հ. Մ. Չամչեան. Պատմ. Հայ. Հատ. Գ. Երես 615։ Իսկ մեք յընթացս բանիս, յաւելաք ինչ ինչ 'ի հրովարտակաց և 'ի դատաստանական գրոց, առանց եղծանելոյ զկարգ պատմութեանն։ Սակայն 'ի պատմութեանն և 'ի դատաստանական գիրս երեւի փոքր ինչ անհամաձայնութիւն բանից, զի 'ի պատմութեան գրի, «Եկեալ